



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 31 - Ա

13 փետրվարի 2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 23-ՐԴ ՏԱՐԵԴԱՐԶԻՆ
ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ 23 - ՐԴ ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասով, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության անկախության 23-րդ տարեդարձին նվիրված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների 23-րդ մարզական խաղերի անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության անկախության 23-րդ տարեդարձին նվիրված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների 23-րդ մարզական խաղերի տարածքային փուլի անցկացման կազմկոմիտեների և մրցավարական հանձնաժողովների կազմը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության անկախության 23-րդ տարեդարձին նվիրված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների 23-րդ մարզական խաղերի մարզային փուլի անցկացման մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության անկախության 23-րդ տարեդարձին նվիրված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների 23-րդ մարզական խաղերի տարածքային և մարզային փուլերի անցկացման ժամանակացույցը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության անկախության 23-րդ տարեդարձին նվիրված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների 23-րդ մարզական խաղերի անցկացման կազմկոմիտեին /Նախագահ՝ Գ. Բաղայան/

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 23-ի N 1412-Ա/Ք հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության անկախության 23-րդ տարեդարձին նվիրված՝ դպրոցականների հանրապետական 23-րդ մարզական խաղերի անցկացման կանոնակարգի»

- պահանջների համաձայն կազմակերպել մարզի դպրոցականների հանրապետական 23-րդ մարզական խաղերի 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերը.
- 2) ապահովել մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների մասսայական մասնակցությունը Հայաստանի Հանրապետության անկախության 23-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 23-րդ մարզական խաղերին.
 - 3) ապահովել մրցումների անցկացման վերաբերյալ տեղեկանքների հավաքը և մարզային փուլից հետո ներկայացնել հաշվետվություն:
 3. Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Ս. Խլղաթյանին ապահովել մարզի դպրոցականների հավաքական թիմերի մասնակցությունը <<Հայաստանի Հանրապետության անկախության 23-րդ տարեդարձին նվիրված՝ դպրոցականների հանրապետական 23-րդ մարզական խաղերի>> եզրափակիչ փուլի մրցումներին:
 4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա.Հակոբյանին:
 5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Մարզպետ՝



Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

